ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.07.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/130

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 15.06.2020թ. թիվ 26/26-1/8788-2020 գրությամբ «Ալտերնատիվ գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ վարչապետի աշխատակազմի 11.06.2020թ. թիվ 02/18.6/28501-2020 գրության հիման վրա 15.06.2020թ. թիվ 26/26-1/8788-2020 գրությամբ նախաձեռնել է «Ալտերնատիվ գրուպ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Ալտերնատիվ գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Ալտերնատիվ գրուպ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Ալտերնատիվ գրուպ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/130 ընթացակարգի շրջանակներում 23.06.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ վարչապետի աշխատակազմը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 11.06.2020թ. թիվ 02/18.6/28501-2020 գրությամբ հայտնել է, որ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կարիքների համար տպագրական աշխատանքների ձեռքբերման նպատակով 13.05.2020թ. կազմակերպվել է «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՇՁԲ-20/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի արդյունքում 17-րդ և 18-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Ալտերնատիվ գրուպ» ՍՊԸ-ն: Վերջինս ընթացակարգի անգործության ժամկետի ավարտից հետո գրությամբ դիմել է Վարչապետի աշխատակազմ՝ հայտնելով ընթացակարգին իր հետագա մասնակցությունից հրաժարվելու մասին: Վերոգրյալով պայմանավորված՝ «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՇՁԲ-20/14» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի սույն թվականի հունիսի 05-ի թիվ 04 որոշմամբ «Ալտերնատիվ գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է և ընտրված մասնակից է ճանաչվել հաջորդ տեղ զբաղեցրած մասնակիցը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/130 ընթացակարգի շրջանակներում 23.06.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2020/130 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2020/130 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կարիքների համար՝ տպագրական աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՇՁԲ-20/14» ծածկագրով գնանշման

հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ալտերնատիվ գրուպ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.05.2020թ. նիստի թիվ 03 արձանագրության համաձայն՝ «Ալտերնատիվ գրուպ» ՍՊԸ-ն Ընթացակարգի 17-րդ և 18-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից և որոշվել է անգործության ավարտից հետո ծանուցել Պայմանագրի նախագիծը և առաջարկել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման ապահովումը և պայմանագրի ապահովումը՝ միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով, որը ներկայացնելուց հետո սահմանված կարգով կկնքվի պայմանագիր:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.06.2020թ. նիստի թիվ 04 արձանագրությամբ արձանագրվել է, որ «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՇՁԲ-20/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից ճանաչված «Ալտերնատիվ գրուպ» ՍՊԸ-ն 04.06.2020թ. թիվ 080/46971-2020 գրությամբ դիմել է Վարչապետի աշխատակազմ՝ հայտնելով ընթացակարգին իր հետագա մասնակցությունից հրաժարվելու մասին:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել «Ալտերնատիվ գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 15.06.2020թ. թիվ 26/26-1/8788-2020 գրությունը, ՀՀ վարչապետի աշխատակազմի 11.06.2020թ. թիվ 02/18.6/28501-2020 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված

ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես՝ ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կարիքների համար տպագրական աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՇՁԲ-20/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ալտերնատիվ գրուպ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.05.2020թ. նիստի թիվ 03 արձանագրության համաձայն՝ «Ալտերնատիվ գրուպ» ՍՊԸ-ն Ընթացակարգի 17-րդ և 18-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից և որոշվել է անգործության ավարտից հետո ծանուցել Պայմանագրի նախագիծը և առաջարկել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման ապահովումը և պայմանագրի ապահովումը՝ միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով, որը ներկայացնելուց հետո սահմանված կարգով կկնքվի պայմանագիր:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.06.2020թ. նիստի թիվ 04 արձանագրությամբ արձանագրվել է, որ «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՇՁԲ-20/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից ճանաչված

«Ալտերնատիվ գրուպ» ՍՊԸ-ն 04.06.2020թ. թիվ 080/46971-2020 գրությամբ դիմել է Վարչապետի աշխատակազմ՝ հայտնելով ընթացակարգին իր հետագա մասնակցությունից հրաժարվելու մասին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել «Ալտերնատիվ գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ:

«Ալտերնատիվ գրուպ» ՍՊԸ-ն 04.06.2020թ. թիվ 080/46971-2020 գրությամբ հայտնել է հետևյալը.

«...ելնելով երկրում տիրող արտակարգ դրությունից, առաջացել են տեխնիկական խնդիրներ, մասնավորապես՝ պայմանագրի առարկա հանդիսացող ապրանքի հումքի ներմուծումը արտերկրից, ինչը ժամկետային առումով անհնարին է դարձրել պայմանագրի կատարումը: Ուստի՝ ընկերությունը հրաժարվում է վերոնշյալ մրցույթին հետագա մասնակցությունից»:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ուսումնասիրելով ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից Ընթացակարգի շրջանակներում ներկայացված հիմքերը, դրանք համադրելով գործում առկա ապացույցների հետ՝ արձանագրում եմ, որ «Ալտերնատիվ գրուպ» ՍՊԸ-ն թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, քանի որ ընտրված մասնակից ճանաչվելուց հետո՝ 04.06.2020թ. Պատվիրատուին ուղղված գրությամբ, հրաժարվել է Ընթացակարգին հետագա մասնակցությունից, այն է՝ պայմանագիր կնքելուց:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 15.06.2020թ. թիվ 26/26-1/8788-2020 գրությամբ «Ալտերնատիվ գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Ալտերնատիվ գրուպ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**